Ղարաբաղյան հակամարտությունը որպես Հայաստանում ներքաղաքական մրցակցության գործոն – 2018

Լաուրա Բաղդասարյան
Ռեգիոն հետազոտական կենտրոնի տնօրեն

Երեւան 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինչ կար 2018 թ. արտահերթ ընտրություններից առաջ ----------3
Ինչ ենք հետազոտել եւ որքան փուլերով----------5
Ինչպես ենք իրականացրել հետազոտությունը----------7
Ղարաբաղյան հակամարտության խնդիրների սահմանումները----------8
Հակամարտության թեմայի ինտենսիվությունը ----------11
Հռչակված ծրագրային դրույթները ----------13
Շրջանառվող խնդիրների առաջնահերթությունը ----------15
Ովքեր եւ որքան ինտենսիվ ----------18
Ովքեր ինչպես ----------19
Բանավեճերի եւ քննադատության առարկան ----------20
Լսարանների արձագանքները ----------22
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------24
ՀԱՎԵԼՎԱԾ ----------27

ԻՆՉ ԿԱՐ 2018 Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՌԱՋ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ իր այդ կարգավիճակում ղարաբաղյան հակամարտության մասին առաջին հայտարարությունը հնչեց 2018թ. մայիսի 9-ին, Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում: Նախորդ օրը ԱԺ-ում, երկրորդ փորձով[1] խորհրդարանական Հայաստանի վարչապետ ընտրվելուց հետո: Հայտարարության առանցքն այն էր, որ եթե կա խնդիր եւ ցանկություն լուծելու հակամարտությունը, ապա պետք է փոխել բանակցային անտրամաբանական ձեւաչափը: Այն է, բանակցային սեղանին չեն մասնակցում Արցախի հանրապետության իշխանությունները, որոնք լիազորված են հանդես գալ Արցախի ժողովրդի անունից: Իսկ ինքը, որպես միայն Հայաստանի ժողովրդի կողմից լիազորված պաշտոնյա, կարող է հանդես գալ միայն Հայաստանի անունից, որը նույնպես, ինչպես Արցախի հանրապետությունը, կոնֆլիկտ ունի Ադրբեջանի հետ:

Չլիներ այս հայտարարությունը, այցը կընկալվեր սոսկ որպես քայլ, որը խորհրդանշում էր նաեւ ՀՀ նոր իշխանությունների կողմից Արցախի նկատմամբ առանձնակի վերաբերմունք ունենալու իրողությունը: Բայց քանի որ հայտարարությունն ինքնին աննախադեպ սահմանազատում էր Հայաստանի եւ Արցախի իշխանությունների լիազորությունները հակամարտության կարգավորման հարցում, եւ քանի որ հասցեագրված էր միաժամանակ եւ Ադրբեջանին, եւ բանակցային գործընթացը կազմակերպող միջազգային միջնորդներին, ընդգծված ռեզոնանսային դարձավ: Ադրբեջանի տարբեր շրջանակների եւ ՌԴ արտգործնախարարի արձագանքները երկար սպասել չտվեցին: Չնայած Արցախը բանակցային կողմ դարձնելու հարցում հայ հանրության մեջ առկա ավանդական կոնսենսուսին, ՀՀ վարչապետի այս հայտարարությունը վտանգավոր համարեցին ինչպես փորձագիտական որոշ շրջանակներ, այնպես էլ, օրինակ, ՀՀԿ գործիչները, որոնք ի սկզբանե իշխանությունը Ն. Փաշինյանին ու նրա քաղաքական թիմին զիջելը համարում էին մարտահրավեր Հայաստանի նախեւառաջ անվտանգության եւ Ղարաբաղյան հակամարտության բնագավառում արձանագրած ձեռքբերումների տեսանկյունից:

Այս գիծը սկսեց ակնհայտ ցուցադրվել իշխանությունը նոր ուժերին փոխանցելու գործընթացի սկզբից եւեթ՝ 2018 թ. ապրիլ-մայիսից: Բայց իրականում այն երկրի ներսում եւ երկրի հետ կատարվող շատ բաներ ղարաբաղյան հակամարտությամբ պայմանավորելու, հաճախ՝ արդարացնելու տասնամյակների ռազմավարության օրգանական շարունակությունն էր: Չնայած, որ ղարաբաղյան թեմաները միշտ են եղել հանրության ուշադրության կենտրոնում, չնայած, որ պրակտիկ եւ վերբալ հարթություններում հակամարտության համատեքստում արվող քայլերը, ձեւակերպումները միշտ մեկնաբանությունների ու քննարկումների առարկա են դարձել, սակայն ընդհուպ մինչեւ 2018 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունները հակամարտության թեման երբեք չի վերածվել նախընտրական աղմկահարույց բախումների առարկայի:

[1] 2018 թ. մայիսի 1-ին ԱԺ հատուկ նիստում Ն.Փաշինյանը չստացավ բավարար քանակի ձայներ եւ չընտրվեց ՀՀ վարչապետի պաշտոնում:

Այսպես, 1998 թ.ղարաբաղյան հակամարտությունը դարձավ Հայաստանում իշխանափոխության պատճառ, այն բանից հետո, երբ 1997 թ. առաջին նախագահ Լեւոն Տեր Պետրոսյանը հրապարակավ հայտարարեց Ադրբեջանի հետ խաղաղության գնալու իր ծրագրի մասին: Բայց այդ իշխանափոխությունը տեղի ունեցավ ոչ թե ընտրական պայքարի արդյունքում, այլ իշխանական մակարդակում: 1998 թ. Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց, իսկ դրան հաջորդած ընտրությունները պոստֆակտում ուղղակի ձեւակերպեցին այդ իշխանափոխությունը:

2016 թ. ապրիլյան պատերազմից հետո առաջին համապետական ընտրությունների ժամանակ (2017 թ. խորհրդարանական ընտրություններ) Լեւոն Տեր-Պետրոսյանի ղեկավարած ՀԱԿ կուսակցությունն իր նախընտրական ծրագրի առանցքը դարձրել էր Խաղաղության կոնցեպտը, քարոզարշավը առաջ էր մղում գլխավորապես հենց այդ թեմայով: Բայց այս ուժի հետ հակամարտության հարցում անհամաձայնությունները ընտրարշավի ժամանակ դարձյալ ինֆորմացիոն աղմկահարույց գործընթացների, նրա հետ վերբալ փոխհրաձգությունների պատճառ չդարձան: Այդ քարոզարշավի ժամանակ հակամարտության թեման իր ինտենսիվությամբ երկրորդ հորիզոնականում էր[2]: Սակայն հիմնականում ոչ թե հենց ՀԱԿ-ի խաղաղության ծրագրի, այլ ապրիլյան պատերազմի հետ կապված հարցերի (բանակի սպառազինություններով հագեցվածության, ռազմաճակատի անվտանգության ապահովման, պատերազմի արդյունքում կրած մարդկային ու տարածքային կորուստների եւ այլն) տարբեր ուժերի կողմից մատնանշման եւ գործող ՀՀԿ իշխանություններին այդ քառօրյա պատերազմի համատեքստում քննադատելու պատճառով: Ի դեպ, ապրիլյան պատերազմի թեման իր քարոզարշավի ընթացքում ծավալում էր նաեւ այն ժամանակ Ելք դաշինքի ղեկավար Նիկոլ Փաշինյանը:

2018 թ. ընտրություններին ի սկզբանե վերագրվեցին նշանակալի հատկանիշներ, քանի որ դրանք ակնհայտորեն պիտի խորհրդարանում փոխեին քաղաքական ուժերի ներկայացվածության պատկերը եւ իրերի դասավորությունը օրենսդիր մարմնում պետք է համապատասխանեցնեին հեղափոխական իրողություններին: Այն է՝ հանրության շրջանում բարձր լեգիտիմություն վայելող վարչապետն ու իր թիմը պիտի դառնային խորհրդարանական մեծամասնություն: Այն որ ընտրությունների արդյունքում հենց այդպես էլ լինելու է, կասկածի չէր ենթարկում ոչ ոք, այդ թվում նաեւ հեղափոխություն իրականացրած ուժի հետ նախընտրական մրցավազքի դուրս եկած քաղաքական մյուս կուսակցությունները: Որպես ընտրություններում իրենց համար հնարավոր վերջնարդյունք նրանք հայտարարում էին երկրորդ, երրորդ ուժ դառնալու, կամ պարզապես խորհրդարան անցնելու մասին: Սակայն արդեն 2018 թ. հոկտեմբերից[3] էլ ավելի ակնառու դարձան նախանշանները, որ հանրային հարթակներում ընտրական մրցապայքարն ընթանալու է ոչ թե միայն այդ երկրորդ, երրորդ եւ մնացած տեղերի

[2] Տես՝ Հայաստանի օնլայն մեդիան եւ ֆեյսբուքյան հարթակները 2017 թ. խորհրդարանական ընտրություններում, էջ.41, http://www.regioncenter.info/sites/default/files/Elections%20on%20Armenian%20online%20platforms%20%202017%20ARM.pdf

[3] 2018 թ. հոկտեմբերի 2-ին վարչապետ Փաշինյանը ԱԺ-ի բակում իր իսկ կոչով հավաքված հանրության ներկայությամբ պաշտոններից հեռացրեց ՀՅԴ եւ ԲՀԿ նախարարներին եւ հայտարարեց իր հրաժարական ներկայացնելու որոշման մասին: Հրաժարականը ԱԺ-ն ցրելու եւ արտահերթ ընտրություններ նշանակելու անհրաժեշտ քայլ էր գործող Սահմանադրության պահանջով:

հավակնորդների, այլեւ Իմ քայլը դաշինքի եւ մի քանի այլ մասնակիցների միջեւ: Եվ, որ հանրության վրա ազդեցություն ունենալու կարեւոր թեմաներից մեկը՝ ղարաբաղյան հակամարտությունն ու դրա հետ կապված ածանցյալ հարցերը, ամենայն հավանականությամբ, գոնե ՀՀԿ-ի դեպքում, մնալու են նոր իշխանություններին ընդդիմանալու գործիքակազմի շարքում:

Ահա հենց այս իրողությունները մեզ դրդեցին հետազոտելու, թե

- Դառնալո՞ւ է իսկապես ղարաբաղյան հակամարտությունը ներքաղաքական պայքարի գործոն:
- Ի՞նչ դրսեւորումներ է այդ պայքարն ունենալու, քաղաքական ո՞ր ուժերի, մասնագիտական ու այլ խմբերի ինչպիսի՞ մասնակցությամբ:
- Առհասարակ ի՞նչ տեղ է հատկացվելու հակամարտության թեմային Հայաստանում 2018 թ. ընտրական մրցակցության ժամանակ:
- Ինչպե՞ս են արձագանքելու լսարաններն այդ ուղերձներին եւ բանավեճերին:

Այս հարցերի պատասխանները փորձել ենք գտնել՝ հետազոտելով ընտրաշրջանում հայաստանյան օնլայն ԶԼՄ-ներում եւ հեռուստահաղորդումներում հակամարտության մասին հրապարակված/հեռարձակված նյութերը:

ԻՆՉ ԵՆՔ ՀԵՏԱԶՈՏԵԼ ԵՒ ՈՐՔԱՆ ՓՈՒԼԵՐՈՎ

Որպես հետազոտության առարկա վերցրել ենք ղարաբաղյան հակամարտության կոնտեքստի առկայությամբ հայաստանյան 6 օնլայն ռեյտինգային ԶԼՄ-ների (1in.am, News.am, Tert.am, Aravot.am, Armlur.am, Lragir.am) նյութերը եւ 6 հեռուստաընկերությունների (Հ1, Հ3, Երկիր մեդիա, Շանթ, Կենտրոն, Արարատ) թոք-շոու ձեւաչափի բոլոր հաղորդումները 2018 թ. նոյեմբերի 15 - դեկտեմբերի15 ժամանակահատվածում: Դրանք միասնաբար 15 տարբեր հաղորդաշարեր են եղել:

Հ1-ում ուսումնասիրել ենք ***Այսօր իրականում*** հարցազրույցի ժանրի հաղորդումը (ընտրությունների շրջանում թողարկումները դարձան ամենօրյա), հատուկ պաշտոնական քարոզարշավի նախօրեից հեռարձակվող ***Նախընտրական բանավեճ*** դարձյալ ամենօրյա հաղորդումը, ***Խաղի կանոններ*** շաբաթը մեկ անգամ հեռարձակվող բանավիճային ժանրի հաղորդումը:

Հ3-ում մեր հետազոտության առարկա են դարձել ***Տեսակետ, Իրական հայացք*** եւ ***Օրվա դիտարկում*** հարցազրույցի ժանրի հաղորդումները:

Երկիր մեդիայի դեպքում դիտարկել ենք բանավիճային ժանրի ***Դարաշրջան***, նաեւ՝ ***Երկրի հարցը, Հարցեր դաշնակցականներին , Օրվա հյուրը*** հարցազրույցի ժանրի հաղորդումները: Հարցեր դաշնակցականներին հաղորդաշարը դադարել է թողարկվել պաշտոնական քարոզարշավի փուլում:

Շանթում հետեւել ենք այս հեռուստաընկերության թոք-շոու ժանրի միակ հաղորդման թողարկումներին՝ ***Հեռանկարին***:

Կենտրոնում ուսումնասիրել ենք ***Հայելու առաջ*** հաղորդաշարը, որը պաշտոնական քարոզարշավի ժամանակ օրեր են եղել, որ ունեցել է 2, 3 թողարկումներ: Հաղորդումը եղել է եւ հարցազրույցի, եւ բանավիճային ձեւաչափի: Ինչպես նաեւ՝ Էպիկենտրոն լրատվական հաղորդման շրջանակներում հեռարձակված ոչ ամենօրյա ***Էպիկենտրոն-հարցազրույցը***:

Արարատ հեռուստաընկերության եթերում ուսումնասիրել ենք ***Հարցազրույց*** եւ բանավիճային ձեւաչափի ***Դեմ առ դեմ*** հաղորդումները:

Հեռուստաընկերությունների ընտրությունը կատարել ենք՝ ելնելով նրանց քաղաքական առնչությունների հանգամանքից: Այսպես 6-ից 3 հեռուստաընկերություններ պատկանում են ընտրություններին մասնակցած երեք քաղաքական ուժերի (Երկիր մեդիան՝ ՀՅԴ-ին, Կենտրոնը՝ ԲՀԿ-ին, Հ3-ը՝ Օրինաց երկիր կուսակցությանը): Ընտրությունների նախօրեին հայտնի դարձավ Արարատ հեռուստաընկերության եւ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի միջեւ ոչ ֆորմալ առնչությունների մասին, այդ ընկերությունը գնվեց Քոչարյանի բարեկամի կողմից:

Նոյեմբերի 15-դեկտեմբերի 15-ը ներառում է նախընտրական ժամանակահատվածը ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի արդեն ձեւավորված ցանկով[4] (նոյեմբերի 15-25), պաշտոնական քարոզարշավի փուլը (նոյեմբերի 26-դեկտեմբերի 7) եւ առաջին հետընտրական շաբաթը (դեկտեմբերի 8-15): Քվեարկությունը տեղի ունեցավ դեկտեմբերի 9-ին:

[4] 2018 թ. նոյեմբերի 14-ին քաղաքական ուժերը հայտ ներկայացրեցին ԿԸՀ-ում, եւ այդպիսով պարզվեց ընտրություններին մասնակցող ուժերի ցանկը:

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունն անցկացրել ենք քանակական եւ դիսկուրս վերլուծության միջոցով:

- Ներքաղաքական մրցապայքարի համատեքստում բարձրացված ղարաբաղյան հակամարտության խնդիրները սահմանել ենք՝ ելնելով օնլայն հարթակներում եւ հեռուստաեթերում շրջանառված բովանդակություններից:
- Այս կամ այն խնդրի ինտենսիվությունը չափել ենք ***մեկ նյութ-մեկ կամ ավելի խնդիր*** սկզբունքով:
- Հեռուստատեսային բովանդակությունների դեպքում մեկ նյութ ենք համարել ուսումնասիրված հաղորդումների յուրաքանչյուր թողարկումը, որի ընթացքում մասնակիորեն կամ ամբողջովին խոսվել է հենց ղարաբաղյան հակամարտության տարբեր խնդիրների մասին:
- Հակամարտության մասին հանդես եկող քաղաքական, հասարակական, մասնագիտական եւ այլ խմբերի ներկայացուցիչներին սահմանել ենք որպես խնդիրների հեղինակներ: Նրանց ակտիվությունը չափել ենք ***մեկ հեղինակ՝ մեկ կամ մի քանի խնդիր*** սկզբունքով:
- Մեկ նյութում արծարծված խնդիրների քանակը հաշվարկել ենք ըստ դրանց հեղինակների փոփոխության, եւ ըստ ուղերձների նշանների (+, -, 0) փոփոխության՝ ***Որքան հեղինակ՝ նույնքան խնդիր եւ նույնքան կոնոտացիոն նշան*** եւ ***Որքան կոնոտացիոն նշան՝ նույնքան խնդիր*** սկզբունքներով:
- Հեռուստատեսային եւ օնլայն ԶԼՄ-ների բանավիճային հաղորդումների մասնակիցներից հաշվարկների մեջ ենք ընդգրկել այն հեղինակներին, որոնք խոսել են ղարաբաղյան հակամարտության թեմայով:
- Թեմաների նշանները (+, -, 0) որոշել ենք՝ ելնելով ձեւակերպումների ուղիղ իմաստաբանական (semantic), այլ ոչ թե ենթատեքստային ուղերձներից:

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Ելնելով ուսումնասիրված բովանդակություններից սահմանել ենք խնդիրների 23 խմբեր, որոնք տարբեր ինտեսիվությամբ բարձրացվել են մեդիա հարթակներում ելույթ ունեցողների (ընտրություններին մասնակցող եւ չմասնակցող քաղաքական ուժեր, մասնագիտական տարբեր խմբեր, լրագրողներ, Արցախի ներկայացուցիչներ եւ այլն) համատեղ ջանքերով:

Այսպես,

Բանակցային գործընթաց	**Բանակցային գործընթաց** ենք սահմանել այն ձեւակերպումները, որոնցով լսարաններին ներկայացվել են մտքեր բանակցությունների նպատակների եւ մինչ օրս եղած ընթացքի, դրանց մանրամասների ու հետեւանքների մասին, բանակցային օրակարգեր փոխել/չփոխելու ունակությունների, նպատակահարմարության մասին եւ այլն:
Զիջում/ Փոխզիջում	**Զիջում/Փոխզիջում** խնդիրների խմբում մեկտեղել ենք ձեւակերպումներ հայկական եւ ադրբեջանական կողմերի զիջումների կամ փոխզիջումների հնարավորության, նպատակահարմարության, հետեւանքների, պարտադիր պայմանների մասին:
Իրավունքներ	**Իրավունքների խմբում** բացի ինքնորոշման իրավունքի իրացման պայմանների մասին դատողություններից նաեւ ձեւակերպումներ կան հակամարտության կոնտեքստում մարդու իրավունքների ու ազատությունների մասին:
Խաղաղության պարտադրանք	**Խաղաղության պարտադրանքի խնդիրների** խմբում հավաքել ենք ձեւակերպումներ տարածաշրջանում խաղաղության հաստատման, պատերազմի վերսկսումը կասեցնելու նպատակով խաղաղություն պարտադրելու հավանականության մասին: Ընդ որում՝ խաղաղության պարտադրանք ոչ միայն որպես միջազգային ուժերի գործողութուն հակամարտության գոտում սրացումներ դադարեցնելու իմաստով, այլեւ որպես նույն նպատակով հայկական կողմից ձեռնարկվող գործողություն:
Տարածքներ	**Տարածքների խնդիրը** սահմանների որոշարկման, տարածքներ զիջել/չզիջելու հետ կապված ձեւակերպումների խումբն է:

Կարգավիճակ	**Կարգավիճակի խումբը** ԼՂՀ ներկայիս եւ ապագա կարգավիճակի մասին ձեւակերպումներն են, գնահատականները ներկայիս եւ հնարավոր ընդունելի/ցանկացած պարագայում անընդունելի կարգավիճակի մասին:
Սրացում/ Հրադարար	**Սրացում/հրադարարը** ձեւակերպումներ են շփման գծում, սահմանային գոտիներում ռազմական ներկայիս եւ նախկին իրավիճակների մասին, դրա ապագա փոփոխությունների հետ կապված կանխատեսումներ են, հրադադարի պահպանման քաղաքական եւ ռազմատեխնիկական բաղադրիչների մասին մեկնաբանություններ:
Բանակի գործոն	**Բանակի գործոնը** հակամարտության լուծման կամ կողմերի շահերի պաշտպանության համար ռազմական բաղադրիչի, բանակի որպես կարեւոր գործոնի մասին հայտարարությունները, գնահատականներն են:
Ճանաչում	**Ճանաչումը** ձեւակերպումների խումբ է ԼՂՀ կարգավիճակի միջազգային ճանաչման, դրա քաղաքական նշանակության մասին:
Միացում	**Միացումը** ԼՂՀ-ն Հայաստանի մաս ճանաչելու եւ դրանից բխող քաղաքական հետեւանքների մասին պնդումներ, գնահատականներ են:
Հակամարտության գործոն	**Հակամարտության գործոն** խմբում ժողովել ենք ձեւակերպումներ ներհայաստանյան եւ արտաքին քաղաքական հարաբերությունների վրա հակամարտության ազդեցության, ԼՂՀ բնակչության շրջանում հայաստանյան գործընթացների ընկալումների, ՀՀ-ԼՂՀ փոխհարաբերությունների մասին:
Որոշում կայացնողներ	**Որոշում կայացնողների խմբում** ձեւակերպումներ են հակամարտության հետ կապված որոշումներ կայացնողների, նրանց նկատմամբ հասարակության մեջ եղած վստահության, նրանց պատասխանատվության մասին:
Միջնորդներ	**Միջնորդներ խմբում** գնահատականներ են միջնորդ կազմակերպությունների եւ երկրների՝ հակամարտության հարցում դրսեւորած քաղաքականության, միջնորդների միջեւ, նրանց եւ հակամարտության կողմերի միջեւ փոխհարաբերությունների մասին:
Սպառազինություն	**Սպառազինություն խումբը** ձեւակերպումներ են կողմերի սպառազինման, ռազմական պոտենցիալի, այդ բնագավառում կողմերի արտաքին հարաբերությունների, ռազմական

	հավասարակշռության մասին:
Լուծում	**Լուծումը** հակամարտության լուծման ընկալումներն են, բանակցային ճանապարհով կամ պատերազմի միջոցով լուծման մասին պատկերացումներն ու պնդումները:
Փոխվստահություն	**Փոխվստահությունը** գնահատականներ են հայկական եւ ադրբեջանական կողմերի միջեւ փոխվստահության ներկայիս վիճակի, դրա քաղաքական նշանակության եւ այլ հարցերի մասին:
Կողմեր	**Կողմերը** հակամարտության կողմերի սահմանումներ են, հակամարտության տարբեր զարգացումներում նրանց վերապահված հնարավորությունների եւ լիազորությունների մասին գնահատականներ:
Ստատուս-քվո	**Ստատուս-քվոն** դրա ռազմաքաղաքական բաղադրիչների պահպանման կամ փոփոխման հավանականության, տարբերակների գլխավոր շահառուների մասին ձեւակերպումների խումբն է:
Երաշխիքներ	**Երաշխիքներ խմբում** գնահատականներ եւ մեկնաբանություններ են հակամատության կոնտեքստում անվտանգության ներքին եւ արտաքին երաշխիքների, դրանք ապահովող գործոնների, երկրների, կազմակերպությունների մասին:
Հայկական շահեր/ Ադրբեջանական շահեր	**Հայկական շահեր/ադրբեջանական շահեր խմբերում** կողմերի շահերի սահմանումներն են, դրանց անհամադրելիության մասին ձեւակերպումները:
Հռետորաբանություն	**Հռետորաբանություն խմբում** հակադիր կողմի մասին հայ եւ ադրբեջանական հասարակություններում շրջանառվող հռետորաբանության, թշնամանքի լեզվի տարածվածության մասին մեկնաբանություններ են:
Շփումներ	**Շփումները** հակամարտ կողմերի միջեւ պաշտոնական եւ ոչ պաշտոնական շփումների նշանակության, նպատակահարմարության մասին գնահատականներ են:
Արտաքին միջամտություն	**Արտաքին միջամտության խնդիրները** հայաստանյան ներքին գործերին նաեւ հակամարտության համատեքստում ոչ ֆորմալ միջամտության, արտաքին ճնշումների մասին հայտարարություններն են, պնդումները, կանխատեսումները:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Ֆորմալ առումով ղարաբաղյան հակամարտության մասին ձեւակերպումներով նյութերը օնլայն ԶԼՄ-ներում շոշափելի մեծ զանգված չեն կազմել: Ընտրությունների մասին բոլոր, ներառյալ նաեւ օրվա լրատվությունը, նյութերի 92% (նախքան պաշտոնական քարոզարշավը), 88% (պաշտոնական քարոզարշավի փուլ), 93% (հետընտրական առաջին շաբաթ) բացարձակ չեն ունեցել հակամարտության մասին որեւէ ձեւակերպում: Ղարաբաղյան հակամարտության թեման ընտրությունների ընթացքում շրջանառված տարբեր սյուժեների վարկանիշում եղել է 4-րդ եւ 5-րդ տեղերում[5]:

Տես ստորեւ բերված գրաֆիկը:



Հակամարտությանը մասնակիորեն կամ ամբողջովին նվիրված նյութերի քանակը եռակի մեծացավ պաշտոնական քարոզարշավի փուլում, լսարաններին մատուցվում էր մրցավազքի առաջին օրվանից մինչեւ վերջին 12-րդ օրը: Հետընտրական փուլում խնդրի արծարծման ինտենսիվությունը ներքաղաքական կոնտեքստներում վերադարձավ նախաքարոզչական փուլի մակարդակին:

Տես ստորեւ բերված գրաֆիկը, նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 1:

[5] Տես՝ 2018 թ. ընտրությունները եւ հետընտրական օրակարգերը Հայաստանի օնլայն հարթակներում, էջ 19-20, http://www.regioncenter.info/sites/default/files/2018%20Elections%20and%20post-election%20Agendas%20in%20Armenia%20-ARM.pdf



Նոյեմբերի 15-դեկտեմբերի 15 ընթացքում թողարկված հեռուստատեսային թոք-շոու հաղորդումների մոտ 1/4 -ը մասամբ կամ ամբողջովին նվիրված է եղել օֆլայն եւ օնլայն հարթակներում այդ ընթացքում շրջանառվող արցախյան թեմաներին, դրանք ընտրական մրցակցության առարկա դարձնելու հանգամանքներին: Չնայած, որ հեռուստաընկերությունից հետուստաընկերություն թեման տարբեր ինտենսիվությամբ է ներկայացվել:

Տես ստորեւ բերված գրաֆիկը, նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 2:



ՀՌՉԱԿՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Ընտրական համատեքստում մրցակից քաղաքական ուժերը համակարմության մասին հայտարարություններ սկսեցին անել արդեն նախաքարոզչական փուլում: Դա արտահայտվում էր օրինակ, ՀՀԿ-ի եւ Իմ քայլը դաշինքի միջեւ դեռեւս 2018 թ. մայիսից ծավալվող վերբալ դիմակայության ընթացքում, որի առանցքը հայկական պետությունների համար արտաքին քաղաքական (այդ թվում նաեւ ղարաբաղյան հակամարտության հետ կապված) մարտահրավերների եւ ներքին բազմաթիվ չլուծված խնդիրների առաջնայնության մասին բանավեճն է եղել:

Ընտրություններին մասնակցած 11 ուժերից երկուսը՝ ***ՀՀԿ-ն եւ Սասնա ծռեր կուսակցությունը*** հենց այդ նախաքարոզչական փուլում ընտրությունների գնալու եւ ԱԺ-ում լինելու իրենց որոշումը բացատրեցին ղարաբաղյան հակամարտության պարագայով: Երկու կուսակցություններն էլ հայտարարեցին, որ պետք է անպայման լինեն ԱԺ-ում կանխելու համար հակամարտության հետ կապված սխալ որոշումների կայացումը: Չնայած, որ հենց այդ հարցերում ՀՀԿ-ի եւ Սասնա ծռերի ծրագրային դրույթները արմատապես տարբեր էին: Սասնա ծռերի տեսանկյունից հարցի լուծումը Հայաստանի եւ Արցախի դե յուրե միացումն է, ՀՀԿ-ի հռչակած մոտեցումները խարսխվում են Արցախի ինքնորոշման իրավունքի իրացման եւ դա բոլորի կողմից ճանաչելու սկզբունքների վրա:

Միացման դրույթը նաեւ ***ՀՅԴ եւ Ազգային առաջընթաց*** կուսակցությունների ծրագրերում է նշված: Սակայն երկու դեպքում էլ այդ միացումը ներկայացվում է որպես հակամարտության լուծման վերջնարդյունք: ՀՅԴ-ի տեսանկյունից մինչ այդ պետք է կնքել ՀՀ-ի եւ Արցախի հանրապետության միջեւ ռազմական համագործակցության մասին պայմանագիր, խորացնել տարբեր բնագավառներում ինտեգրման գործընթացը, շարունակել աշխատանքը Արցախի հանրապետության միջազգային ճանաչման, նրան բանակցային կողմ դարձնելու ուղղությամբ: Իսկ Ազգային առաջընթացի համար դեպի միացում տանող ճանապարհը հնարավոր է Արցախում տնտեսության զարգացման, ազգաբնակչության էական աճի և հզոր պաշտպանական բանակի ստեղծման միջոցով: Իսկ որպես հնարավոր իրավական լուծում առաջարկվում է Արցախում և Հայաստանում անցկացնել նոր հանրաքվե՝ քաղաքացիների նախաձեռնությամբ, որը պետք է դիտարկել որպես երկու հայկական պետությունների միավորման իրավական լուծման միջազգայնորեն ընդունելի տարբերակ:

Մյուս ուժերի ծրագրային դրույթները ***(Իմ քայլը դաշինք, ԲՀԿ, ԼՀԿ, Մենք դաշինք, Օրինաց երկիր, ՔՈ ՍԴԿ)*** սկզբունքորեն չեն տարբերվում: Դրանք բոլորը խարսխվում են մինչ օրս շրջանառվող թեզերի վրա՝ ինքնորոշման իրավունքի իրացում, բացառապես խաղաղ կարգավորում, միջնորդների ձեւաչափի պահպանում, հրադադարի պահպանում, Արցախի ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովում, նրանց հումանիտար տեղաշարժերի ապահովում եւ այլն: Տարբերությունը ուժից ուժ արձանագրված թեզերի քանակն է եղել: Ասենք, մնացած բոլոր 10 ուժերի համեմատ ամենից մանրամասն նկարագրված են եղել Իմ քայլը դաշինքի՝ հակամարտության հարցի լուծմանը տանող միջոցները: Ընդ որում՝ դրանք անմիջական իրականացնողի տեսանկյունից շարադրված: Ասենք, այլ ուժերի ծրագրերում ղարաբաղյան հակամարտության զարգացման տեսլականները շարադրված են երկրորդ շարքի դերակատարների ոճով, «նպաստել », «սատարել» եւ այլ նման կարգի ձեւակերպումների կիրառմամբ:

Ի տարբերություն մնացած բոլոր քաղաքական ուժերի, ***Վերածնունդ*** կուսակցության ծրագրային դրույթներն ավելի կոնկրետ ձեւակերպումներ ստացան նրանց ներկայացուցիչների հրապարակային ելույթների ընթացքում, երբ պարզվեց, որ իրենք համարում են խնդիրը լուծված, իսկ այդ իրողության միջազգայնորեն ամրագրումը տեսնում են միջնորդ ձեւաչափի փոփոխության եւ ՄԱԿ-ի՝ երկրների ապագաղութացման մասին որոշումները հիմք ընդունելու միջոցով:

ՇՐՋԱՆԱՌՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌԱՁՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հակամարտության թեման դարձավ ոչ միայն մի քանի ուժերի միջեւ կոշտ բախումների պատճառ, այլեւ՝ էականորեն ազդեց քարոզարշավի ընթացքի վրա, նպաստեց հանրային լայն քննարկումների ու ղարաբաղյան թեմայով խնդիրների շրջանառմանը: Խնդիրներ, որոնք նախորդ ընտրությունների ժամանակ չէին բարձրացվել հայկական հանրային հարթակներում միաժամանակ այդքան քաղաքական ուժերի կողմից, այլ քննարկվել են կամ մասնագիտական վերլուծական շրջանակներում, կամ հանրայնացվել են ՁԼՄ-ներում առանձին հրապարակումների տեսքով:

Մենք արձանագրել ենք 23 տարբեր խնդիրներ, որոնք բարձրացվել են օնլայն հարթակներում եւ հեռուստահաղորդումներում, երբ ներկայացվում էին հակամարտության հարցով ընթացող դեմ առ դեմ եւ հեռակա բանավեճերի բովանդակությունները, երբ արվում էին այդ առիթով հայտարարություններ, կամ մեկնաբանվում էր քարոզարշավի ընթացքը ղարաբաղյան հարցերի օգտագործմամբ: Ընթացող բանավեճերը առիթ դարձան նաեւ օնլայն ՁԼՄ-ներում եւ հեռուստահաղորդումներում մասնակից ուժերի՝ հակամարտությանը վերաբերող ծրագրային դրույթների ներկայացման համար: Սակայն, ելնելով թեմաների ինտենսիվության ցուցանիշներից, առավել մեծ ուշադրություն է դարձվել ոչ այնքան այդ տեսլականներին, որքան բանավեճերին, օֆլայն քարոզարշավների ընթացքում արված հայտարարություններին, դրանց երկար սպասել չտված արձագանքներին ու հակափաստարկներին:

Այսպես, օնլայն ՁԼՄ-ներում պաշտոնական քարոզարշավի ընթացքում առավել ինտենսիվ շրջանառված երկու թեմաները հակամարտության գործոնի (18%) եւ տարածքների (10%) խնդիրներն են եղել: Երրորդ հորիզոնականում սպառազինությունների հարցն է եղել (7%): Այնուհետեւ՝ բանակցային գործընթացի, հակամարտության կոնտեքստով իրավունքների/ազատությունների, հակամարտության կողմերի հարցերը: Հենց դրանք են կազմել ընթացող բանավեճերի ու կոշտ վերբալ դիմակայության առանցքը:

Օնլայն ՁԼՄ-ներում, մնացած բոլոր խնդիրների հիշատակումների ինտենսիվությունը էականորեն չի տարբերվել: Վարկանիշային սանդղակի առաջին հորիզոնականները զբաղեցնող խնդիրների համեմատ էականորեն ավելի քիչ են առաջ քաշվել ավանդաբար հնչեղ այնպիսի հարցերը, ինչպես Արցախի կարգավիճակի, դրա ճանաչման, անվտանգության արտաքին եւ ներքին երաշխիքների, հակամարտության զարգացման մեջ արտաքին միջամտությունների, հակամարտությունը պատերազմի միջոցով լուծելու, հրադադարի պահպանման ու ռազմաճակատում սրացումների, կամ որոշում կայացնողների խնդիրները: Ենթադրվում էր, որ նոր իշխանությունների պարագայում այս վերջինը պետք է ավելի բարձր ցուցանիշներ ունենար:

Տես ստորեւ բերված գրաֆիկը, ինչպես նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 3:



Հեռուստահաղորդումների պարագայում պատկերն այլ է: Առաջին տեղում ըստ հիշատակումների ինտենսիվության տարածքների հարցն է եղել (15%), ապա հակամարտության հարցում հայկական կողմից որոշում կայացնողների (9%) եւ հայաստանյան գործընթացներում հակամարտության գործոնի հարցերը (8%):

Տես ստորեւ բերված գրաֆիկը, նաեւ՝ Հավելված, Աղյուսակ 4:


Հակամարտության խնդիրների վարկանիշը հեռուստահաղորդումներում
6%
3%
3%
2%
2%
2%
4%
3%
4%
4%
4%
5%
7%
7%
8%
9%
15%
մնացած
7 թեմաները՝
9%
Տարածքներ 15%
Որոշում կայացնողներ 9%
Հակամարտության գործոն 8%
Հայկական շահեր 7,5%
Միացում 7%
Բանակցային գործընթաց 5%
Փոխզիջում 4,5%
Բանակ 4,5%
Սպառազինություն 4%
Կողմեր 4%
Կարգավիճակ 3%
Հրադարար/ Սրացում 6%
Ճանաչում 3%
Արտաքին միջամտություն 3%
Միջնորդներ 2,5%
Ներքին երաշխիքներ 2,5%
Արտաքին երաշխիքներ 2,5%
Խաղաղության պարտադրանք 1,5%
Լուծում/պատերազմի միջոցով 1,5%
Ստատուս-քվո/ պահպանում 1,5%
Ադրբեջանական շահեր 1,5%
Ստատուս-քվո/ փոփոխում 1%
Հռետորաբանություն 1%
Ծփումներ 1%
Լուծում/ քաղաքական ճանապարհով 0,5%

ՈՎՔԵՐ ԵՒ ՈՐՔԱՆ ԻՆՏԵՆՍԻՎ

Մեր տվյալներով օնլայն ԶԼՄ-ներում հակամարտության հետ կապված ամենից շատ խնդիրներով հանդես եկած ուժը ՀՀԿ-ն է եղել: ՀՀԿ-ի եւ նոր իշխանությունների միջեւ բանավեճերը հիմնականում ընթացել են այս կուսակցության ցուցակի առաջին տեղերը զբաղեցնող գործիչների եւ վարչապետի կատարմամբ: Վարչապետի թիմի մյուս ներկայացուցիչները ավելի քիչ խնդիրներով են հանդես եկել:

Թեմայով շատ անգամ հանդես եկած մյուս երկու ուժերը Սասնա ծռեր եւ ՀՅԴ կուսակցություններն են եղել: Իրենց քարոզարշավի ընթացքում ամենից քիչ անգամ հակամարտությանն անդրադարձել են ընտրություններին մասնակցող երեք նոր կուսակցությունները՝ ՔՈ ՍԴԿ-ն, ՀՔԺ Վերածնունդը, եւ Ազգային առաջընթացը[6]: Օնլայն հարթակներում շրջանառվել է նաեւ Արցախի ներկայացուցիչների՝ իշխանությունների եւ այլ գործիչների խոսքը, կապված հակամարտությանն առնչվող նախընտրական բանավեճերի հետ: Նրանց արձագանքներն ավելի շատ են եղել, քան մնացած բոլոր մրցակից ուժերի խոսքը հակամարտության մասին, բացի ՀՀԿ-ից եւ վարչապետից:

Տես՝ Հավելված, Աղյուսակ 5:

Հեռուստատեսային թոք-շոու հաղորդումներին մասնակցելու են հրավիրվել բոլոր 11 ուժերի ներկայացուցիչները: Չնայած, որ մեր հետազոտության ժամանակահատվածում մնացածից ավելի շատ հյուրերը եղել են փորձագետները եւ առանձին այլ մասնագետները: Ընտրություններին չմասնակցող կուսակցությունների ներկայացուցիչներից՝ Երկիր ծիրանի կուսակցության առաջնորդն է եղել: Մյուս չմասնակցող ուժերը, ինչպես օնլայն ԶԼՄ-ների դեպքում էր, այս թեմայով առհասարակ ելույթներ չեն ունեցել:

Տես՝ Հավելված, Աղյուսակ 6:

Հեռուստահաղորդումներում հակամարտության հետ կապված ամենից շատ խնդիրներով հանդես են եկել ՀՅԴ ներկայացուցիչները (Երկիր մեդիա հեռուստաընկերությունում), ապա նվազման կարգով՝ ՀՀԿ-ի (Հ1, Կենտրոն եւ Արարատ հեռուստաընկերություններում), Սասնա ծռերի (Հ1 եւ Արարատ հեռուստաընկերություններում), Մենք դաշինքի, Իմ քայլը դաշինքի (Հ1, Արարատ եւ Կենտրոն հեռուստաընկերություններում) եւ այլ ուժերի ներկայացուցիչները: Հատկանշական է, որ ՕԵԿ ներկայացուցիչները Հ3-ի եթերում ավելի քիչ անգամ են անդրադարձել հակամարտության թեմային, քան Հանրային հեռուստատեսության եթերում (Հ1): Նույն պատկերն է ԲՀԿ-ի դեպքում: Հակամարտության թեմայով նրանց բոլոր ելույթները հնչել են բացառապես Հանրային հեռուստաընկերության թոք-շոու հաղորդումներում, իսկ Կենտրոնի այդ ընթացքում կազմակերպած հարցազրույցների եւ բանավեճերի ժամանակ նրանք առհասարակ այդ կոնտեքստներով հանդես չեն եկել:

Տես Հավելված՝ Աղյուսակ 7:

[6] Այս երեք կուսակցությունները հիմնվել են ընտրությունների նախօրեին, 2018 թ. հոկտեմբեր-նոյեմբերին:

ՈՎՔԵՐ ԻՆՉՊԵՍ

Օնլայն ԶԼՄ-ներում ակնհայտորեն արտահայտվել է **ՀՀԿ կուսակցության** կողմից հակամարտության թեման մրցապայքարի առարկա դարձնելու քարոզչական գիծը եւ մրցակից ուժերի նկատմամբ բացասական տրամադրվածությունն այդ համատեքստում եւս: Այսպես, թեմայով մրցակից ուժերի հիշատակմամբ ասված խոսքի 60%-ը բացասական գնահատականներով է եղել: ՀՀԿ-ի կողմից սփռվող քննադատական վերաբերմունքի առաջին գծի հասցեատերերը վարչապետը եւ նրա քաղաքական թիմն են եղել:

Վարչապետի եւ Իմ քայլը դաշինքի խոսքում, ի տարբերություն ՀՀԿ-ի, բացասական, դրական եւ չեզոք նշաններով գնահատականների քանակի միջեւ էական տարբերություն չի գրանցվել: Անձամբ վարչապետի բացասական գնահատականները, որոնք հասցեագրվել են ոչ միայն ՀՀԿ ներկայացուցիչներին, այլեւ հնչել են առանց հասցեատերերի կոնկրետացման, ընդհանրական ձեւակերպումներով, երեք անգամ ավելի քիչ են եղել ՀՀԿ-ի բացասական նշանով հայտարարություններից:

Թեեւ այս թեմայով վերբալ բախումներ են գրանցվել նաեւ **վարչապետի ու ՀՅԴ ներկայացուցիիչների** միջեւ, սակայն իշխանությունների նկատմամբ վերջիններիս բացասական տրամադրվածությունը հակամարտության համատեքստում այդքան ակնառու չի եղել, ինչպես ՀՀԿ-ի դեպքում էր: ՀՅԴ -ի բացասական գնահատականները կազմել են այս ուժի խոսքի 20%-ը:

Սասնա ծռեր կուսակցության ներկայացուցիչները հակամարտության թեմայով ավելի շատ խոսել են կամ առանց որեւէ ուժի կոնկրետ հիշատակման, կամ՝ նրանց հասցեին ուղղված չեզոք գնահատականներով:

Մյուս ուժերի տրամադրվածության մասին կարելի է իմանալ՝ Հավելված, Աղյուսակ 8-ում:

Հեռուստահաղորդումներում մոտավորապես նույն պատկերն է գրանցվել մասնակից ուժերի տրամադրվածության հարցում:

Տես՝ Հավելված, Աղյուսակ 9:

ԲԱՆԱՎԵՃԵՐԻ ԵՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Ըստ էության ընտրություններին մասնակցում էր քաղաքական ուժերի մի խումբ, որոնց մոտեցումները հակամարտության հարցում տարբերվում էին գլխավոր հարցում, կապված Արցախի կարգավիճակի հետ: Մի խմբում, ինչպես ներկայացրել ենք վերը, ուժեր են, որոնք հարցի լուծումը տեսնում են Հայաստանի եւ Արցախի միավորման միջոցով, իսկ մյուսում այն ուժերն են, որոնք շեշտը դնում են Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի եւ Արցախի հանրապետության կարգավիճակի միջազգային ճանաչման վրա:

Սակայն, չնայած այս ռազմավարական բնույթի էական տարբերություններին, հակամարտության հարցում կոշտ դիմակայությունը ծավալվեց ոչ թե այս երկու խմբի քաղաքական ուժերի, այլ գլխավորապես Իմ քայլը դաշինքի եւ ՀՀԿ-ի միջեւ: Իսկ այս երկու ուժերի ծրագրային տեսլականները առանցքային հարցերում, ինչպես արդեն նշել ենք, նույնն են (ինքնորոշման իրավունքի իրացում, կարգավիճակի ճանաչման խնդիր, Արցախի ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովում եւ երաշխավորում, միջնորդների նույն ձեւաչափի ընդունում եւ ճանաչում, հարցը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու մտադրվածություն եւ այլն):

ՀՅԴ-ի ներկայացուցիչների եւ վարչապետի միջեւ հակամարտության հարցում ունեցած բանավեճերը, որոնք հրապարակային հարթակներում նվազ քանակի եւ հնչեղության օրինակներով են դրսեւորվել, վերաբերել են Արցախի սահմանադրության մեջ արձանագրված դրույթներին, տարածքների հետ կապված հարցերին: Սա հատկապես դրսեւորվեց հեռուստատեսային մեծ դեբատների ժամանակ (2018 թ. դեկտեմբերի 5): Իր ձեւաչափով աննախադեպ այդ դեբատների մի տեւական հատված նվիրված է եղել հակամարտության հարցում ընտրապայքարի դուրս եկած 11 ուժերի դիրքորոշումների ներկայացմանն ու դրանց շուրջ բանավեճին:

Ըստ էության ողջ ընտրարշրջանի ընթացքում հակամարտությանը վերաբերող խնդիրների ճնշող մեծամասնությունը ավանդական են հանրային հարթակների համար: Բացառությամբ մի քանիսի (Արցախի ներկայացուցիչների մասնակցության հարցերը հայաստանյան գործընթացների հետ կապված բանավեճերին, այդ գործընթացների ընկալումների հարցը Արցախի բնակչության շրջանում եւ այլն):

Քարոզարշավի ժամանակ խնդիրները շրջանառվել են հիմնականում փոխկապակցված: Այսպես, բանակցությունների խնդիրը զուգակցվել է հակամարտության լուծման տեսլականների, հակամարտության կողմերի, որոշում կայացնողների խնդիրների հետ:
Երաշխիքների թեման արծարծվել է բանակի, Ղարաբաղի հանրապետության կարգավիճակի, կողմերի միջեւ եղած բալանսի ու նրանց սպառազինման, արտաքին եւ ներքին մի շարք հանգամանքների հետ միասին: Եվ այսպես շարունակ:
Բանավեճերն ու անհամաձայնություններն արտահայտվեցին մի քանի խնդիրների առնչությամբ:

Հակամարտության գործոնի թեմայով բանավեճերը զարգանում էին մեծ հաշվով ***հին իշխանությունները տանում էին հայկական կողմին տապալման, նոր***

իշխանությունները տանելու են հայկական կողմին տապալման հայելային հայտարարությունների շրջանակներում:

ՀՀԿ-ի ներկայացուցիչները Փաշինյանին ու նրա թիմին մեղադրեցին ***իշխանություն Արցախի դիմաց*** քաղաքական ծրագիր ունենալու եւ ի դեմս մի շարք թիմակիցների, այս ընտրարշավի ժամանակ վերբալ մակարդակում այն փորձարկելու մեջ: Արդյո՞ք Արցախը պետք է վերաբերմունք արտահայտի Հայաստանում իրականացող գործընթացների մասին: Կամ՝ արդյո՞ք Հայաստանին պետք է հետաքրքրի Արցախի բացառապես անվտանգության հարցերը, ետնաբեմում թողնելով այնտեղի ներքաղաքական գործընթացները, մարդու իրավունքների ու ազատությունների հետ կապված հարցերը: Սրանք նույնպես հակամարտության գործոն խմբի այն թեմաներն են, որոնք մինչ այդ գրեթե չեն բարձրացվել հանրային հարթակներում:

Վարչապետ/Իմ քայլը դաշինքի եւ ՀՀԿ-ի, վարչապետի եւ ՀՅԴ-ներկայացուցիչների միջեւ ընթացած բախումների առիթով բազմաթիվ հայտարարություններ են հնչել այն մասին, որ հակամարտության հետ կապված դիսկուրս շահարկումներ են տեղի ունենում, որոնք աննախադեպ վտանգավոր են: Այդ կարգի հայտարարություններ արել են ոչ միայն վերլուծաբաններն ու այլ մասնագետները, այլեւ ընտրություններին մասնակցող մյուս քաղաքական ուժերը:

Ընտրությունների ընթացքում քննարկվել է նաեւ հակամարտության համատեքստում Ն. Փաշինյանի բարձր լեգիտիմության նշանակությունը, դարձյալ հայելանման գնահատականներով: Մի կողմից, որ բարձր լեգիտիմությունը հայանպաստ որոշումներ կայացնելու ամուր հիմք է, մյուս կողմից՝ որ հակառակը, այդպես ավելի հեշտ է լինելու հանրությանը թեքել դեպի որեւէ լուծման տարբերակ:

Չնայած քարոզարշավի ընթացքում հնչած հայտարարություններին հայերի միասնականության մասին, այն մասին, որ չկան եւ չեն եղել ղեկավարներ, որոնք պատրաստվում էին Արցախը զիջել Ադրբեջանին, հակառակ պնդումներն ավելի ռեզոնանսային հնչեղություն ունեին, հակառակ պնդումներով ընթանում էին բախումներ Իմ քայլը դաշինքի եւ ՀՀԿ ներայացուցիչների միջեւ լայն ճակատով, ընտրական ցուցակների առաջին դեմքերի եւ մյուս ներկայացուցիչների մասնակցությամբ:

Տարածքների թեմայի առնչությամբ Սասնա ծռեր կուսակցության ներկայացուցիչները միանգամայն կոնկրետ հայատարարեցին, որ դեմ են որեւէ տարածք վերադարձնելուն, ինչը նախատեսված է Մադրիդյան սկզբունքներում: Տարածքների զիջումը ոչ թե լուծելու է հակամարտությունը, ոչ թե կայուն խաղաղություն է հաստատելու տարածաշրջանում, այլ, հակառակը, հանգեցնելու է լայնամասշտաբ և կործանարար պատերազմի: Ըստ կուսակցության ներկայացուցիչների պնդումների, մնացած բոլոր կուսակցությունները հողերը տալու կողմակից են: Իսկ իրենք հանդես են գալիս Արցախի եւ Հայաստանի միավորման օգտին:

ՀՀԿ-ի ներկայացուցիչներն, ի պատասխան այս եւ տարածքների թեմայով ուրիշ հայտարարությունների, ընդգծում էին, որ իրենք համաձայնություն են տվել ոչ թե

Մադրիդյան սկզբունքներին, որոնց հիմքում տարածքներ վերադարձնելու սկզբունքն է, այլ համաձայնություն են տվել այդ սկզբունքների շուրջ բանակցություններ վարելուն: Տարածքների թեմայով բանավեճերի ու բախումների մյուս առարկան 2016 թ. ապրիլյան պատերազմի ժամանակ կրած տարածքային կորուստն է եղել, ինչպես նաեւ 2018 թ. գարնանը նախիջեւանյան ուղղությամբ ադրբեջանական եւ հայկական ուժերի միջեւ տարածության կրճատման հարցն է եղել:

Վարչապետի եւ նրա թիմի դեմ ՀՀԿ ելույթների մյուս թեման վերաբերել է ***բանակցությունների եւ հրադադարի պահպանման, ռազմաճակատում սրացումների հարցերին:*** Թեման սկիզբ առավ 2018թ. սեպտեմբերից, երբ ԱՊՀ երկրների ղեկավարների գագաթաժողովի ժամանակ տեղի ունեցած Փաշինյան-Ալիեւ կարճ հանդիպումներից հետո հայտարարվեց ձեռքբերված պայմանավորվածության մասին՝ նվազեցնել լարվածությունը սահմանում եւ հաստատել օպերատիվ կապ կողմերի միջեւ սուր իրավիճակները հաղթահարելու համար: Այս պայմանավորվածությունը, որը պահպանվեց նաեւ ընտրությունների ժամանակ, միեւնույն է դարձավ հատկապես ՀՀԿ ներկայացուցիչների քննադատության եւս մեկ թեման, քանի որ ըստ այդ պնդումների՝ Նիկոլ Փաշինյանը ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում նպատակաուղղված քանդում է նախորդ բանակցային փուլում հայկական կողմի բոլոր առկա դիրքերը՝ փոխարենը բավարարվելով «վերելակային դիվանագիտությամբ»: Այս միտքը քանիցս արտահայտել են պաշտոնական քարոզարշավի ընթացքում հանրապետական տարբեր թեկնածուներ:

ԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Օնլայն ՁԼՄ-ներում եւ հեռուստահաղորդումներում առավելագույն դիտումներ ունեցել են ոչ թե մրցակից ուժերի հակամարտության հետ կապված ծրագրային դրույթների մասին, կամ դրանց շուրջ քննարկումներով նյութերը, այլ այն նյութերը, որտեղ մանրամասն ներկայացվել են վարչապետի/Իմ քայլը դաշինքի ու ՀՀԿ ներկայացուցիչների միջեւ հեռակա ու դեմ առ դեմ բանավեճերը: Ընդ որում՝ բոլոր առավելագույն դիտումներով նյութերը հրապարակվել են պաշտոնական քարոզարշավի օրերին:

Այսպես,

1in.am-ի այս թեմայով նյութերից առավելագույն դիտումներ ունեցել են ***Քարոզարշավ՝ օր առաջին. սկանդալային հայտարարություն, որն ալեկոծեց բոլորին*** (26.11.2018, 28 500 դիտում) եւ ***Դավիթ Շահնազարյանը թշնամի է, նա միշտ եղել է ռևանշիստ. Վահան Բադասյան***, (27.11.2018, 38 500 դիտում) նյութերը:

News.am-ի դեպքում դիիտումների առավելագույն քանակը հասել է 131 299, (***Կարգի հրավիրեք եւ կարգի հրավիրվեք, թողեք այս բռնապետական պաթոսը. Մարգարիտ Եսայանը՝ Փաշինյանին***, 30.11.2018): Հաջորդ առավելագույն դիտումներով (35 670 դիտում) նյութը դեկտեմբերի 5-ի մեծ դեբատների տեսանյութն է եղել, որն այս լրատվամիջոցը ներկայացրել է ինչպես ամբողջությամբ, այնպես էլ հատվածաբար:

Այս տեսանյութը գրավել է Aravot.am-ի եւ Armlur.am-ի ղարաբաղյան հակամարտության թեմայով բոլոր նյութերի դիտումների առաջին հորիզոնականը (179 260 դիտում):

Aravot.am –ում շատ դիտումներով հաջորդ նյութերը նույնպես եղել են վարչապետի/ նրա թիմի ներկայացուցիչների ու ՀՀԿ ցուցակի առաջին մի քանի համարների միջեւ բանավեճերի մասին (***Դավիթ Շահնազարյան. Անակնկալներ ես իրենց համար եմ խոստանում, թող պատրաստվեն, քաղաքական զրահաբաճկոններ հագնեն***, 15.11.2018, 10102 դիտում, ***Արցախցի իրավապաշտպանը՝ Նիկոլ Փաշինյանին.Մեր թշնամի երկրի ղեկավարը նույնիսկ նման բան իրեն թույլ չի տալիս,*** 29.11.2018, 12410 դիտում):

Tert.am -ի հակամարտության թեմայով նյութերի առավելագույն (141 898) դիտումներ ունեցել է ՀՀԿ-ի ցուցակը գլխավորող պաշտպանության նախկին նախարար Վիգեն Սարգսյանի ելույթի տեսագրությունը, որտեղ նա ամփոփում է քարոզարշավը, խոսում է նաեւ բանակցային գործընթացի եւ արտաքին երաշխիքների թեմաներով: Հաջորդ մեծ քանակի դիտումներով նյութը (119 896 դիտում) հրապարակվել է քվեարկության օրը ՝ ***Դավիթ Շահնազարյանը նախկինում շիզոֆրենիա է ունեցել. եթե մենք չգայինք, Ղարաբաղը հանձնած կլինեին. Սասուն Միքայելյան (տեսանյութ):***

Lragir.am-ի առավելագույն դիտումներով նյութերի թեմատիկան այլ է եղել: Առաջինը լռության օրը ՀՀ ՊՆ-ի կողմից տարածած Հայաստանի սպառազինությունում եղած հիթիռային համակարգերի ցուցադրությամբ տեսանյութն է եղել , հաջորդը՝ արտաքին միջամտության թեմայով ***Ադրբեջանն արդեն ՀԱՊԿ անդամ է. Լուկաշենկոն խաբե՞լ է*** նյութ է:

Նույն պատկերն է նաեւ հեռուստահաղորդումների դեպքում: Ավելի շատ դիտումներ, բայց նաեւ՝ ավելի շատ dislike-եր ունեցել են առավել կոշտ ու կատեգորիկ ձեւակերպումներով հաղորդումները:

Տես՝ Հավելված, Աղյուսակ 10:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Չնայած, որ ղարաբաղյան թեմաները միշտ են եղել հանրության ուշադրության կենտրոնում, չնայած, որ պրակտիկ եւ վերբալ հարթություններում հակամարտության համատեքստում արվող քայլերը, ձեւակերպումները միշտ մեկնաբանությունների ու քննարկումների առարկա են դարձել, սակայն ընդհուպ մինչեւ 2018 թ. արտահերթ խորհրդարանական ընտրությունները հակամարտության թեման երբեք չի վերածվել միանգամից մի քանի մասնակիցներով նախընտրական ռեզոնանսային բախումների առարկայի:

- Այս ընտրաշրջանում էլ, չլինեին պաշտոնական քարոզարշավի հենց առաջին իսկ օրվանից սկսած եւ ընդհուպ մինչեւ լռության օրը ձգված հակամարտության կոնտեքստով բանավեճերն ու աղմկահարույց սուր հայտարարությունները, թեման էականորեն չէր առանձնանալու քարոզարշավի ժամանակ արծարծված բազմաթիվ այլ թեմաների շարքում: Մանավանդ, որ ֆորմալ առումով այն ըստ ինտենսիվության ցուցանիշների զբաղեցնում էր օնլայն հարթակներում 4-րդ տեղը, թոք-շոու ժանրի հեռուստահաղորդումներում՝ 5-րդ հորիզոնականը:

- Սա մի ժամանակահատված էր, որի առաջին փուլում էլ հնչում էին ՀՀԿ-ի ու նոր իշխանական թիմի միմյանց դեմ ուղղված ելույթներ: Դրանք տարբեր, այդ թվում՝ հակամարտության հետ կապված թեմաներով էին: Սակայն կոշտ դիմակայությունը հենց այս հարցի համատեքստում սկսվեց պաշտոնական քարոզարշավի ժամանակ, զարգացավ ձնագնդի պես եւ ասպարեզ բերեց մի շարք այնպիսի խնդիրներ, որոնք մինչ այդ հրապարակային հարթակներում շրջանառվել են վերլուծական առանձին նյութերում (ասենք, Արցախի ներկայացուցիչների վերբալ մասնակցության հարցերը հայաստանյան գործընթացների հետ կապված բանավեճերին, այդ գործընթացների ընկալումների հարցը Արցախի բնակչության շրջանում, Արցախում մարդու իրավունքների եւ ազատությունների հարցը եւ այլն): Պաշտոնական քարոզարշավի 12 օրերի ընթացքում հակամարտության թեմայով նյութերը օնլայն ԶԼՄ-ներում եռակի շատացան:

- Հակամարտության հետ կապված մոտեցումները մասնակից քաղաքական ուժերը ներկայացրել էին իրենց նախընտրական ծրագրերում: Մեծ հաշվով, ելնելով այդ դրույթներից, կարող ենք հավաստել, որ ընտրություններին մասնակցում էր քաղաքական ուժերի մի խումբ, որոնք չնայած հակամարտության հարցում հայտարարած տակտիկական ընդհանրություններին, բաժանվում էին երկու մասի: Առաջինում այն ուժերն էին, որոնք շեշտադրումներն անում էին Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի, Արցախի անկախության կարգավիճակի միջազգայնորեն ճանաչման վրա (Իմ քայլը դաշինք, ՀՀԿ, ԲՀԿ, ԼՀԿ, ՕԵԿ, Մենք դաշինք, ՔՈ ՍԴԿ, ՀՔԺ Վերածնունդ): Իսկ մյուս մասում այն ուժերն էին, որոնք առաջ էին քաշում Հայաստանի եւ Արցախի պաշտոնական միավորման թեզը (ՀՅԴ, Սասնա ծռեր,Ազգային առաջընթաց): Ճիշտ է, ասենք ի տարբերություն Սասնա ծռեր կուսակցության, որը հակամարտության լուծումը տեսնում է Հայաստանի եւ

Արցախի ի սկզբանե միավորման մեջ, մյուս երկուսն այդ միավորումը համարում են որպես մի շարք խնդիրների լուծման վերջնարդյունք:

- Սակայն, չնայած այս տարբերություններին, հակամարտության հարցում կոշտ դիմակայությունը ծավալվեց ոչ թե այս երկու խմբի քաղաքական ուժերի, այլ գլխավորապես Իմ քայլը դաշինքի եւ ՀՀԿ-ի միջեւ, որոնց ծրագրային տեսլականները առանցքային հարցերում նույնն էին՝ ինքնորոշման իրավունքի իրացում, կարգավիճակի ճանաչման խնդիր, Արցախի ժողովրդի ֆիզիկական անվտանգության ապահովում եւ երաշխավորում, միջնորդների նույն ձեւաչափի ընդունում եւ ճանաչում, հարցը բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու մտադրվածություն: ՀՅԴ-ի ներկայացուցիչների եւ վարչապետի միջեւ հակամարտության հարցում ունեցած բանավեճերը, որոնք հրապարակային հարթակներում նվազ քանակով եւ պակաս հնչեղությամբ օրինակներով են դրսեւորվել, վերաբերել են Արցախի սահմանադրության մեջ արձանագրված դրույթներին, տարածքների հետ կապված հարցերին: Սա հատկապես դրսեւորվեց հեռուստատեսային մեծ դեբատների ընթացքում, որոնց մի հատվածը վերաբերում էր քաղաքական ուժերի հակամարտության հարցում ունեցած դիրքորոշումներին:

- Օնլայն ԶԼՄ-ներում պաշտոնական քարոզարշավի ընթացքում առավել ինտենսիվ շրջանառված թեմաները հակամարտության գործոնի եւ տարածքների խնդիրներն են եղել: Երրորդ հորիզոնականում սպառազինությունների հարցն է եղել : Այնուհետեւ՝ բանակցային գործընթացի, հակամարտության կոնտեքստով իրավունքների/ազատությունների, հակամարտության կողմերի հարցերը: Հենց դրանք են կազմել ընթացող բանավեճերի ու կոշտ վերբալ դիմակայության առանցքը: Չնայած, որ հեռուստահաղորդումները, որոնք իրենց ձեւաչափով ավելի մեծ հնարավորություն են ունեցել ներկայացնելու ուժերի միջեւ ընթացած բախումների դրդապատճառներն ու բուն էությունը, սակայն թեմաների առաջնահերթություններն այստեղ այլ են եղել:

- Հակամարտության թեմայով մրցակից ուժերի քննադատական, բացասական նշանով հիշատակումներ բոլորից շատ արել են ՀՀԿ ներկայացուցիչները: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀԿ-ի քննադատության թիրախում գլխավորապես վարչապետն ու նրա քաղաքական թիմն են եղել, սակայն վերջիններս մրցակից ուժերի, այդ թվում՝ ՀՀԿ-ի հասցեին ավելի քիչ քանակի բացասական նշանի ձեւակերպումներ են ունեցել: Իսկ Իմ քայլը դաշինքի մյուս ներկայացուցիչներն առհասարակ վարչապետից ավելի քիչ անգամ են անդրադարձել հակամարտության թեմային:

- Հակամարտության թեմայով ոչ բոլոր նյութերն են արժանացել լսարանների առանձնակի մեծ ուշադրությանը եւ արձագանքներին: Դիտումների առավել բարձր ցուցանիշներ ունեցել են ՀՀԿ-ի եւ վարչապետի, ՀՀԿ-ի եւ Իմ քայլը դաշինքի մի քանի ներկայացուցիչների միջեւ կոշտ հռետորաբանությամբ ընթացած հեռակա բախումների մասին նյութերը: Այլ ոչ թե, ասենք այն նյութերը,

որոնցում տարբեր ուժեր ներկայացրել են իրենց մոտեցումներն ու դիրքորոշումները հակամարտության հետ կապված տարբեր խնդիրներում:

- 2018 թ. արտահերթ ընտրությունների ժամանակ ղարաբաղյան հակամարտության թեման ակնհայտորեն կիրառվեց որպես ընտրություններում կոշտ մրցակցության գործոն:

ՀԱՎԵԼՎԱԾ

Աղյուսակ 1. Հակամարտության թեմայի դինամիկան ընտրությունների տարբեր փուլերում

ԶԼՄ	Հակամարտության թեմայի առկայությամբ նյութերի քանակ 15-25.11	Հակամարտության թեմայի առկայությամբ նյութերի քանակ 26.11-7. 12	Հակամարտության թեմայի առկայությամբ նյութերի քանակ 8-15.12	Ընդամենը
1in.am	25	45	6	76
	33%	59%	8%	100%
News.am	19	96	21	136
	14%	71%	15%	100%
Aravot.am	9	38	15	62
	15%	61%	24%	100%
Armlur.am	2	15	4	21
	10%	71%	19%	100%
Tert.am	34	91	19	144
	24%	63%	13%	100%
Lragir.am	12	40	16	68
	18%	59%	24%	100%
Ընդամենը	**101**	**325**	**81**	**507**
	20%	**64%**	**16%**	**100%**

Աղյուսակ 2. Հակամարտության թեմայի առկայությամբ հաղորդումների մասնաբաժինը հեռուստաընկերություններում/ 15.11-15.12.2018

ՀԸ	Հաղորդումներ	Թողարկումների քանակ	Հակամարտության թեմայի առկայությամբ թողարկումների քանակ	Հակամարտության թեմայի առկայությամբ թողարկումների մասնաբաժինը %
Հ1	Այսօր իրականում	23	11	48%
	Խաղի կանոններ	5	1	20%
	Նախընտրական բանավեճ	13	5	38%
	ԸՆԴԱՄԵՆԸ	**41**	**17**	**41%**
Հ3	Տեսակետ	18	2	11%
	Օրվա դիտարկում	26	2	8%
	Իրական հայացք	2	2	100%
	ԸՆԴԱՄԵՆԸ	**46**	**6**	**13%**
Երկիր մեդիա	Դարաշրջան	4	0	0%
	Երկրի հարցը	22	3	14%
	Հարցեր դաշնակցականներին	8	3	38%
	Օրվա հյուրը	17	5	29%
	ԸՆԴԱՄԵՆԸ	**51**	**11**	**22%**
Շանթ	Հեռանկար	61	3	5%
	ԸՆԴԱՄԵՆԸ	**61**	**3**	**5%**
Կենտրոն	Էպիկենտրոն-Հարցազրույց	8	1	13%
	Հայելու առաջ	35	12	34%
	ԸՆԴԱՄԵՆԸ	**43**	**13**	**30%**
Արարատ	Դեմ առ դեմ	8	4	50%
	Հարցազրույց	17	10	59%
	ԸՆԴԱՄԵՆԸ	**25**	**14**	**56%**
Ընդամենը		**267**	**65**	**24%**

Աղյուսակ 3. Հակամարտության խնդիրների վարկանիշը օնլայն ԶԼՄ-ներում /15.11-15.12.2018 թ.

Ինչի մասին/ խնդիր	1in.am	News.am	Aravot.am	Armlur.am	Tert.am	Lragir.am	Ընդամենը
Հակամարտության գործոն	39	26	18	4	53	29	169
	23%	15%	11%	2%	31%	17%	100%
Տարածքներ	12	33	18	7	10	9	89
	13%	37%	20%	8%	11%	10%	100%
Սպառազինություն	8	21	10	3	18	7	67
	12%	31%	15%	4%	27%	10%	100%
Բանակցային գործընթաց	6	28	9	4	8	2	57
	11%	49%	16%	7%	14%	4%	100%
Իրավունքներ/ ազատություններ	4	31	5	8	3	4	55
	7%	56%	9%	15%	5%	7%	100%
Բանակ	4	9	7	4	19	4	47
	9%	19%	15%	9%	40%	9%	100%
Կողմեր	3	18	8	8	8	2	47
	6%	38%	17%	17%	17%	4%	100%
Միջնորդներ	11	18	2	3	4	2	40
	28%	45%	5%	8%	10%	5%	100%
Հայկական շահեր	5	16	2	2	9	4	38
	13%	42%	5%	5%	24%	11%	100%
Լուծում/ քաղաքական ճանապարհով	6	9	5	5	7	5	37
	16%	24%	14%	14%	19%	14%	100%
Փոխզիջում	5	6	5	4	9	3	32
	16%	19%	16%	13%	28%	9%	100%
Արտաքին երաշխիքներ	7	5	3	1	11	2	29
	24%	17%	10%	3%	38%	7%	100%
Որոշում կայացնողներ	7	10	4	3	0	3	27
	26%	37%	15%	11%	0%	11%	100%

Հրադարար/ սրացում	2	13	12	1	4	0	32
	6%	41%	38%	3%	13%	0%	100%
Ներքին երաշխիքներ	9	3	4	1	7	4	24
	38%	13%	17%	4%	29%	17%	100%
Ճանաչում	1	8	2	3	7	3	24
	4%	33%	8%	13%	29%	13%	100%
Միացում	2	7	5	1	2	2	19
	11%	37%	26%	5%	11%	11%	100%
Ստատուս-քվո/ պահպանում	1	7	5	1	3	0	17
	6%	41%	29%	6%	18%	0%	100%
Կարգավիճակ	2	4	2	0	4	3	15
	13%	27%	13%	0%	27%	20%	100%
Լուծում/պատերազմի միջոցով	3	1	5	0	2	4	15
	20%	7%	33%	0%	13%	27%	100%
Ադրբեջանական շահեր	3	7	2	0	1	0	13
	23%	54%	15%	0%	8%	0%	100%
Հռետորաբանություն	0	9	0	0	2	0	11
	0%	82%	0%	0%	18%	0%	100%
Արտաքին միջամտություն	0	0	3	2	4	2	11
	0%	0%	27%	18%	36%	18%	100%
Ստատուս-քվո/փոփոխում	0	0	3	0	2	3	8
	0%	0%	38%	0%	25%	38%	100%
Խաղաղության պարտադրանք	0	0	0	0	2	0	2
	0%	0%	0%	0%	100%	0%	100%
Շփումներ	0	0	0	0	0	1	1
	0%	0%	0%	0%	0%	100%	100%
Ընդամենը	**140**	**289**	**139**	**65**	**199**	**98**	**930**
	15%	**31%**	**15%**	**7%**	**21%**	**11%**	**100%**

Աղյուսակ 4. Հակամարտության խնդիրների վարկանիշը հեռուստահաղորդումներում/15.11-15.12.2018 թ.

Ինչի մասին/ խնդիր	Հ1	Հ3	Երկիր Մեդիա	Շանթ	Կենտրոն	Արարատ	Ընդամենը
Տարածքներ	4	2	4	3	10	7	30
	6%	17%	11%	43%	36%	14%	15%
Որոշում կայացնողներ	7	1	4	0	4	2	18
	11%	8%	11%	0%	14%	4%	9%
Հակամարտության գործոն	6	0	0	1	4	5	16
	9%	0%	0%	14%	14%	10%	8%
Հայկական շահեր	7	0	3	0	2	3	15
	11%	0%	8%	0%	7%	6%	7.5%
Միացում	7	1	1	2	1	2	14
	11%	8%	3%	29%	4%	4%	7%
Բանակցային գործընթաց	3	1	6	0	0	0	10
	5%	8%	16%	0%	0%	0%	5%
Փոխզիջում	2	0	3	0	0	4	9
	3%	0%	8%	0%	0%	8%	4.5%
Բանակ	5	2	1	0	0	1	9
	8%	17%	3%	0%	0%	2%	4.5%
Սպառազինություն	4	1	1	0	0	2	8
	6%	8%	3%	0%	0%	4%	4%
Կողմեր	3	0	1	0	1	3	8
	5%	0%	3%	0%	4%	6%	4%
Կարգավիճակ	0	0	1	0	3	2	6
	0%	0%	3%	0%	11%	4%	3%
Հրադարար/ Սրացում	2	1	4	0	1	4	12
	3%	8%	11%	0%	4%	4%	6%
Ճանաչում	2	1	1	0	0	2	6
	3%	8%	3%	0%	0%	4%	3%

Արտաքին միջամտություն	1	0	0	0	1	4	6
	2%	0%	0%	0%	4%	8%	3%
Միջնորդներ	4	0	0	1	0	0	5
	6%	0%	0%	14%	0%	0%	2.5%
Ներքին երաշխիքներ	3	0	1	0	0	1	5
	5%	0%	3%	0%	0%	2%	2.5%
Արտաքին երաշխիքներ	1	1	1	0	0	2	5
	2%	8%	3%	0%	0%	4%	2.5%
Խաղաղության պարտադրանք	1	0	1	0	0	1	3
	2%	0%	3%	0%	0%	2%	1.5%
Լուծում/պատերազմի միջոցով	0	0	0	0	1	2	3
	0%	0%	0%	0%	4%	4%	1.5%
Ստատուս-քվո/ պահպանում	1	0	0	0	0	2	3
	2%	0%	0%	0%	0%	4%	1.5%
Ադրբեջանական շահեր	1	0	1	0	0	1	3
	2%	0%	3%	0%	0%	2%	1.5%
Ստատուս-քվո/ փոփոխում	1	0	1	0	0	0	2
	2%	0%	3%	0%	0%	0%	1%
Հռետորաբանություն	0	0	2	0	0	0	2
	0%	0%	5%	0%	0%	0%	1%
Շփումներ	0	1	0	0	0	1	2
	0%	8%	0%	0%	0%	2%	1%
Լուծում/ քաղաքական ճանապարհով	1	0	0	0	0	0	1
	2%	0%	0%	0%	0%	0%	0.5%
Ընդամենը	**66**	**12**	**37**	**7**	**28**	**51**	**201**
	100%	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**	**100%**

Աղյուսակ 5. Ով է խոսել հակամարտության թեմայով օնլայն ԶԼՄ-ներում/15.11-15.12

Ով	1in.am	News.am	Aravot.am	Armlur.am	Tert.am	Lragir.am	Ընդամենը
ՀՀԿ	11	33	17	7	34	8	110
	10%	30%	15%	6%	31%	7%	100%
Վարչապետ	12	29	11	7	23	16	98
	12%	30%	11%	7%	23%	16%	100%
Լրագրող	23	1	5	2	5	18	54
	43%	2%	9%	4%	9%	33%	100%
ՀԿ/Փորձագետ/այլ մասնագետ	11	11	6	0	22	4	54
	20%	20%	11%	0%	41%	7%	100%
Այլ երկրի ներկայացուցիչ	7	20	15	4	14	4	64
	11%	31%	23%	6%	22%	6%	100%
Արցախի ներկայացուցիչ	9	15	8	2	7	7	48
	19%	31%	17%	4%	15%	15%	100%
Սասնա Ծռեր	3	15	6	3	8	3	38
	8%	39%	16%	8%	21%	8%	100%
ՀՅԴ	6	10	5	2	8	4	35
	17%	29%	14%	6%	23%	11%	100%
Իմ քայլը դաշինք	4	4	5	4	9	2	28
	14%	14%	18%	14%	32%	7%	100%
Կառավարություն	2	10	5	0	4	3	24
	8%	42%	21%	0%	17%	13%	100%

Մենք դաշինք	0	3	3	3	3	0	12
	0%	25%	25%	25%	25%	0%	100%
ԲՀԿ	2	3	1	1	2	0	9
	22%	33%	11%	11%	22%	0%	100%
ԼՀԿ	1	2	1	1	4	0	9
	11%	22%	11%	11%	44%	0%	100%
ՕԵԿ	0	2	1	1	5	0	9
	0%	22%	11%	11%	56%	0%	100%
ՔՈ ՍԴԿ	0	1	2	1	1	0	5
	0%	20%	40%	20%	20%	0%	100%
ՀՔԺ Վերածնունդ	1	2	1	1	0	0	5
	20%	40%	20%	20%	0%	0%	100%
Ազգային առաջընթաց	0	3	1	1	0	0	5
	0%	60%	20%	20%	0%	0%	100%
Այլ քաղուժեր/գործիչներ	4	5	1	0	1	2	13
	31%	38%	8%	0%	8%	15%	100%
Սփյուռք	1	0	0	0	0	1	2
	50%	0%	0%	0%	0%	50%	100%
Ընդամենը	**96**	**169**	**94**	**40**	**150**	**71**	**620**
	15%	**27%**	**15%**	**6%**	**24%**	**11%**	**100%**

Աղյուսակ 6. Հաղորդումների հրավիրված հյուրերը/15.11-15.12

Ով	Հ1	Հ3	Երկիր մեդիա	Շանթ	Կենտրոն	Արարատ	Ընդամենը
ՀԿ/փորձագետ/այլ մասնագետ	26	23	11	13	4	7	84
	31%	27%	13%	15%	5%	8%	100%
ՔՊ/Իմ քայլը դաշինք	13	1	6	11	5	9	45
	29%	2%	13%	24%	11%	20%	100%
ՀՀԿ	15	1	6	7	9	6	44
	34%	2%	14%	16%	20%	14%	100%
ՀՅԴ	9	1	15	3	3	3	34
	26%	3%	44%	9%	9%	9%	100%
ԼՀԿ	13	1	7	3	3	5	32
	41%	3%	22%	9%	9%	16%	100%
ՕԵԿ	10	13	1	2	3	0	29
	34%	45%	3%	7%	10%	0%	100%
ԲՀԿ	9	1	1	5	7	2	25
	36%	4%	4%	20%	28%	8%	100%
ՀՔԺ Վերածնունդ	7	2	1	3	2	10	25
	28%	8%	4%	12%	8%	40%	100%
Մենք դաշինք	10	0	2	4	5	1	22
	45%	0%	9%	18%	23%	5%	100%
Սասնա ծռեր	8	1	0	3	2	4	18
	44%	6%	0%	17%	11%	22%	100%
ՔՈ ՍԴԿ	6	1	2	3	2	2	16
	38%	6%	13%	19%	13%	13%	100%
Ազգային առաջընթաց	5	1	0	2	2	0	10
	50%	10%	0%	20%	20%	0%	100%
Այլ քաղուժեր/գործիչներ	0	0	2	0	3	1	6
	0%	50%	50%	50%	50%	50%	50%
Կառավարություն	0	0	0	2	0	0	2
	0%	0%	0%	100%	0%	0%	100%
ԿԸՀ/դիտորդներ /ընտրական հանձնաժողովներ	0	0	0	1	0	0	1
	0%	0%	0%	100%	0%	0%	100%
ՏԻՄ ներկայացուցիչներ	0	0	0	1	0	0	1
	0%	0%	0%	100%	0%	0%	100%
Ընդամենը	**131**	**46**	**54**	**63**	**50**	**50**	**394**
	33%	**12%**	**14%**	**16%**	**13%**	**13%**	**100%**

Աղյուսակ 7. Ով որքան խնդիրներով է խոսել հակամարտության մասին հեռուստահաղորդումների ընթացքում/15.11-15.12

Ով	Հ1	Հ3	Երկիր մեդիա	Շանթ	Կենտրոն	Արարատ	Ընդամենը
ՀՅԴ	4	0	18	0	6	5	33
	12%	0%	55%	0%	18%	15%	100%
ՀՀԿ	12	2	1	0	8	5	28
	43%	7%	4%	0%	29%	18%	100%
ՀԿ/փորձագետ/ այլ մասնագետ	5	5	10	2	1	3	26
	19%	19%	38%	8%	4%	12%	100%
Սասնա ծռեր	10	2	0	2	1	7	22
	50%	10%	0%	10%	5%	35%	100%
Մենք դաշինք	6	0	0	1	5	7	19
	32%	0%	0%	5%	26%	37%	100%
Իմ քայլը դաշինք	6	0	1	0	1	7	15
	40%	0%	7%	0%	7%	47%	100%
ԼՀԿ	4	0	7	0	0	3	14
	29%	0%	50%	0%	0%	21%	100%
ՀՔԾ Վերածնունդ	1	0	0	1	2	10	14
	7%	0%	0%	7%	14%	71%	100%
ՕԵԿ	7	3	0	0	0	0	10
	70%	30%	0%	0%	0%	0%	100%
Այլ քաղաքական ուժեր	0	0	0	0	5	2	7
	0%	0%	0%	0%	71%	29%	100%
ԲՀԿ	5	0	0	0	0	0	5
	100%	0%	0%	0%	0%	0%	100%
Ազգային առաջընթաց	5	0	0	0	0	0	5
	100%	0%	0%	0%	0%	0%	100%
ՔՈ ՍԴԿ	1	0	0	0	0	2	3
	33%	0%	0%	0%	0%	67%	100%
Ընդամենը	**66**	**12**	**37**	**6**	**29**	**51**	**201**
	129%	**6%**	**18%**	**3%**	**14%**	**25%**	**100%**

Աղյուսակ 8. Ով ինչպես է խոսել հակամարտության թեմայով օնլայն ԶԼՄ-ներում/15.11-15.12

Ով	+	-	0	Առանց որեւէ ուժի հիշատակման	Ընդամենը
ՀՀԿ	16	66	11	17	110
	15%	60%	10%	15%	100%
Վարչապետ	17	22	23	36	98
	17%	22%	23%	37%	100%
Այլ երկրի ներկայացուցիչ	0	1	7	56	64
	0%	2%	11%	88%	100%
Լրագրող	2	22	14	16	54
	4%	41%	26%	30%	100%
ՀԿ/Փորձագետ/այլ մասնագետ	3	21	8	22	54
	6%	39%	15%	41%	100%
Արցախի ներկայացուցիչ	7	10	9	22	48
	15%	21%	19%	46%	100%
Սասնա Ծռեր	13	5	12	8	38
	34%	13%	32%	21%	100%
ՀՅԴ	4	7	11	13	35
	11%	20%	31%	37%	100%
Իմ քայլը դաշինք	2	9	7	10	28
	7%	32%	25%	36%	100%
Կառավարություն	1	0	5	18	24
	4%	0%	21%	75%	100%
Մենք դաշինք	7	2	1	2	12
	58%	17%	8%	17%	100%
Այլ քաքաղուժեր/գործիչներ	0	2	3	8	11
	0%	18%	27%	73%	100%
	0%	3%	4%	11%	15%
ԲՀԿ	0	0	1	8	9
	0%	0%	11%	89%	100%
ԼՀԿ	0	4	0	5	9
	0%	44%	0%	56%	100%
ՕԵԿ	1	3	4	1	9
	11%	33%	44%	11%	100%
ՔՈ ՍԴԿ	0	1	1	3	5
	0%	20%	20%	60%	100%
ՀՔԺ Վերածնունդ	0	1	0	4	5
	0%	20%	0%	80%	100%
Ազգային առաջընթաց	0	0	0	5	5
	0%	0%	0%	100%	100%
Սփյուռք	0	0	0	2	2
	0%	0%	0%	100%	100%
Ընդամենը	**73**	**176**	**117**	**256**	**620**
	12%	**28%**	**19%**	**41%**	**100%**

Աղյուսակ 9. Ով ինչպես է խոսել հակամարտության թեմայով հեռուստահաղորդում /15.11-15.12

Ով	+	-	0	Առանց որեւէ ուժի հիշատակման	Ընդամենը
ՀՀԿ	6	13	4	5	28
	21%	46%	14%	18%	100%
ՀՅԴ	2	2	11	18	33
	6%	6%	33%	55%	100%
ՀԿ/փորձագետ/այլ մասնագետ	1	3	2	20	26
	4%	12%	8%	77%	100%